1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Սուրբ Մարիամ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար արևային ֆոտովոլտային համակարգի ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՄ ԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 թվականի N 2850-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ-ՄՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Սուրբ Մարիամ-մուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար արևային ֆոտովոլտային համակարգի ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա.պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Չադրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Արտուշ Ավագյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

2026-10-06 16:32:57 GMT+4
ստորագրված է ԵԿԵՆԳԻ կողմից

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2851 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 95/14 ՀԱՍՑԵԻ 47,02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (35,23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 47,02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՅԼԻ,ՄԿՐՏԻՉ,ՀԱՍՄԻԿ,ԱՐԱՐԱՏ,ԱՆԱՀԻՏ ՍԱՆՈՍՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Ղանդիլյան փողոց N 95/14 հասցեի 47,02(քառասունյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18122014-08-0037 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 207-Ա որոշումը և քաղաքացի Գրիշա Սանոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2014 թվականի հունիսի 20-ին N 5322 թվագրմամբ) և Արարատ Սանոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 03-ին N 15827 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Ղանդիլյան փողոց N 95/14 հասցեի 47,02(քառասունյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (35,23 (երեսունհինգ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գնով, որը կազմում է 239802 (երկու հարյուր երեսունինը հազար ութ հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով որպես ընդհանուր համատեղ սեփականություն օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Լեյլի,Մկրտիչ,Հասմիկ,Արարատ,Անահիտ Սանոսյաններին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Ղանդիլյան փողոց N 95/14 հասցեի 47,02(քառասունյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1,0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 89996(ութսունինը հազար ինը հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով որպես ընդհանուր համատեղ սեփականություն օտարել քաղաքացիներ Լեյլի,Մկրտիչ,Հասմիկ,Արարատ,Անահիտ Սանոսյաններին:

3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Լեյլի,Մկրտիչ,Հասմիկ,Արարատ,Անահիտ Սանոսյանները պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Լեյլի, Մկրտիչ, Հասմիկ, Արարատ, Անահիտ Սանոսյանների միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լեյլի,Մկրտիչ,Հասմիկ,Արարատ,Անահիտ Սանոսյաններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-10-06 14:08:23 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<06>> հոկտեմբերի 2026 թվականի N 2852 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԼԻԼԻԹ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Անժելա Վանիկի Մանուկյանի 2026 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Լիլիթ-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անժելա Վանիկի Մանուկյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 12-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 12-ից 30-ը ներառյալ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Անժելա Վանիկի Մանուկյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դաստիարակ Նարինե Լևոնի Սարգսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժելա Վանիկի Մանուկյանին և Նարինե Լևոնի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-10-06 14:39:01 GMT+4
Ստեղծված է ԷՀԵՆԳ-ի կողմից

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 06 >> հոկտեմբերի 2026 թվականի N 2853 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՓԱՐՈՍ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Արմինե Հովհաննեսի Կարապետյանի 2026 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Փարոս-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Հովհաննեսի Կարապետյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 7-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 3 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 7-ից 9-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Արմինե Հովհաննեսի Կարապետյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն զմակերպության մեթոդիստ Գայանե Գևորգի Մանուկյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Հովհաննեսի Կարապետյանին և Գայանե Գևորգի Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հունվարի 2026 թվականի №2854-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՎԵՐԴԼՈՎԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Հովհաննիսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17412-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սվերդլովի փողոց 3-րդ փակուղի 9 հասցեում գտնվող ժառանգության իրավունքով քաղաքացի Հարություն Հովհաննիսյանին պատկանող բնակելի տունը վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ն. Ղորղանյան փողոց, 338/1 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հարություն Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

06.01.2026 11:20:47 GMT+4
Վավերացված է ԵԿԵՆԳ-ի կողմից

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 թվականի N 2855-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված ուղեցույցի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա և սեպտեմբերի 15-ի N 161-Ա որոշումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդով օտարելու համար հայտարարել աճուրդ, որը կկայանա 2026 թվականի նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 03-ը ներառյալ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-10-06 10:16:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 06
N 2855-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գյումրի համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 30-ի ժամը 11^{00}-ից մինչև դեկտեմբերի 03-ի ժամը 11^{00} ներառյալ: https:/ /www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա և սեպտեմբերի 15-ի N 161-Ա որոշումների համաձայն օտարման ենթակա ներքոհիշյալ անշարժ գույքերը

Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը (հասցե)	Լոտի կադաստրային ծածկագիրը	Շինության ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Հողամասի ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Անշարժ գույքի գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Լոտի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Նախավճարի չափը (ՀՀ դրամ)
1.	Ե. Չարենցի փողոց N 15/7	08-001-0094-0007	1422,36	957,1	50 860 000	51 000 000	
2.	Ա. Շիրակացու փողոց N 11/34	08-001-0617-0278	49,33	57,5	3 554 000	4 000 000	
3.	Մյասնիկյան փողոց N 11/4	08-001-1317-0011	85,51	120,0	8 158 000	8 300 000	
4.	Թբիլիսյան խճուղի N 2/22	08-001-0502-0043	102,3	1130,04	3 962 000	4 000 000	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան /հասցեն՝ ք.Գյումրի, Վարդանանց հր. 1, 0312 2.22.29/: համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդին մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք

- Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով (www.e-auctions.am) էլեկտրոնային համակարգում, գրանցումը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի:
- Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (www.e-auctions.am) գրանցվելուց և մուտք գործելուց հետո e-payments համակարգի միջոցով ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճարը:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու պահանջվող փաստաթղթերը աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը առցանց եղանակով փոխանցում է կազմակերպիչին, արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաղթողը պարտավոր է փոխանցել լոտի գինը ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ 900215301574 հաշվեհամարին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» հունվարի 2026 **թվականի** N 2856 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՑ 26-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված ուղեցույցի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15 -ի N 128-Ա որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդով օտարելու համար հայտարարել երկրորդ էլեկտրոնային աճուրդ՝ որոշմամբ սահմանված հողամասերի սկզբնական մեկնարկային գնի 85 տոկոսի չափով, որը կկայանա 2026 թվականի նոյեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 26-ը ներառյալ , համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-01-06 11:04:32 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 06
N 2856-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գյումրի համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 23-ի ժամը 11[00]-ից մինչև նոյեմբերի 26-ի ժամը 11[00] ներառյալ : https:/ /www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 128-Ա որոշման համաձայն օտարման ենթակա ներքոհիշյալ հողամասերը

Հ/Հ	Լոտի հ/հ	Հողամասի հասցեն /գտնվելու Վայրը /տարածագնահատման գոտին	Հողամասի կադաստրային ծածկագիրը և մակերեսը՝ քառ.մ.	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների, ջրատարի,կոյուղու,էլեկտրահաղորդման գծերի,գազատարի առկայության մասին տվյալներ	Հողամասի գնահատված արժեքը	Հատկացված հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը	Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը ՀՀ դրամ
1.		Երևանյան խճուղի N 119/4 10-րդ գոտի	08-001-1172-0029 750,0	Սպասարկման օբյեկտի կառուցում	չկա	չկա	9 965 000		12 705 375	
2.		Կ.Հալաբյան փողոց N 9/26 13-րդ գոտի	08-001-0128-0060 32,64	Ավտոտնակի կառուցում	չկա	չկա	600 000		510 000	
3.		Կ.Հալաբյան փողոց N 9/27 13-րդ գոտի	08-001-0128-0062 32,64	Ավտոտնակի կառուցում	չկա	չկա	600 000		510 000	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան /հասցեն՝ ք.Գյումրի, Վարդանանց հր. 1, 0312 2.22.29/: համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդին մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք

- Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով (www.e-auctions.am) էլեկտրոնային համակարգում, գրանցումը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի:
- Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (www.e-auctions.am) գրանցվելուց և մուտք գործելուց հետո e-payments համակարգի միջոցով ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճարը:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու պահանջվող փաստաթղթերը աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը առցանց եղանակով փոխանցում է կազմակերպիչին, արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաղթողը պարտավոր է փոխանցել լոտի գինը ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ 900215301145 հաշվեհամարին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Հոկտեմբերի 2026 **թվականի** N 2857 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ պայմանագրի ժամկետը լրացել է 2025 թվականի հունվարի 14-ին և հինք ընդունելով քաղաքացի Անժելա Սասնիկի Ղայֆեջյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 25-ին N 17160 թվագրմամբ)՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2020 թվականի հունվարի 14-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Անժելա Սասնիկի Ղայֆեջյանին ժամանակավոր մեաղական ավտոտնակ (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Գործարանային փողոցի N 8/18 հասցեի 20,0 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասի» N 55-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2020 թվականի մարտի 16-ի (գրանցված սեղանամատյանում N 1691) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե N 20032020-08-0028 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անժելա Սասնիկի Ղայֆեջյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-10-06 10:20:25 GMT+4
Համապատասխան է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2858-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-16 ՏԱՐԵԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ 2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2026-2027 թվականների առաջնության 2026 թվականի հոկտեմբերի 10–ին Արթիկ համայնքում կայանալիք 1-ին տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 5-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին գործուղման ծախսերի 2026 թվականի հոկտեմբերի 10–ին Արթիկ համայնքում գործուղել 12 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 50.200(հիսուն հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունվարի 06 N 2838-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Խաչատրյան	Մերի	մարզիկ	AO0332335	6424130284	1510091992759900	3.800
2.	Հարությունյան	Տաթև	մարզիկ	AX0403251	5127120224	16013085492200	3.800
3.	Ֆլիկյան	Գոհար	մարզիկ	AL0319141	7524110375	1510005109911000	3.800
4.	Կոստանյան	Կարինե	մարզիկ	AX0342518	5334130039	1510059523965200	3.800
5.	Գրիգորյան	Մանե	մարզիկ	AO0345661	7321130290	1510079953109500	3.800
6.	Շահինյան	Թամարա	մարզիկ	AX0302823	7334130111	24100685415200	3.800
7.	Մինասյան	Գայանե	մարզիկ	AX0388013	5121120249	220373622202000	3.800
8.	Թորոսյան	Անի	մարզիկ	AY0230045	6932120461	11802072739200	3.800
9.	Մկրտչյան	Մանե	մարզիկ	AX0418392	5824110263	220540841099000	3.800
10.	Հունանյան	Մարիամ	մարզիկ	AO0354911	7731120511	1570030838038300	3.800
11.	Հակոբյան Հակոբյան	Սյուզի Հասմիկ	Մարզիկ ծնող	AS0450604	8105860139	1570075778187700	3.800
12.	Սարիբեկյան	Մարիամ	մարզիկ	AO0451204	8130130365	11802068600200	3.800
13.	Գալոյան	Մելինե	մարզիչ	AR0215784	6023010199	15100145885158	4.600
Ընդամենը							**50.200**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2859-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-14 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների 2026-2027 թվականների առաջնության 2026 թվականի հոկտեմբերի 9-ին Երևան քաղաքում կայանալիք 1-ին տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 6-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների 2026-2027 թվականների առաջնության հերթական 1-ին գործուղման ծախսերի 2026 թվականի հոկտեմբերի 9-ին Երևան քաղաք նքում գործուղել 7 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 51.200(հիսունմեկ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունվարի 06 N 23-59-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Նազարեթյան Սարուխանյան	Ռազմիկ Նուշիկ	մարզիկ ծնող	006964316	7401840812	163003998495	6.300
2.	Գևորգյան Գևորգյան	Վարազդատ Վարդան	մարզիկ ծնող	002544187	2907830082	2050565228371001	6.300
3.	Բայրիկյան	Արկադի	Մարզիկ	AL0448877	1531130704	1570099300980100	6.300
4.	Կիրակոսյան	Նարեկ	մարզիկ	AX0496104	1327140330	1630010051869	6.300
5.	Ոսկանյան	Էմին	Մարզիկ	AO0341724	2529130051	220064954534000	6.300
6.	Գևորգյան Գևորգյան	Սամվել Զարուհի	Մարզիկ ծնող	AV0290430	7908830110	220060294224000	6.300
7.	Հունանյան Հովհաննիսյան	Սրապ Հեղուշ	Մարզիկ ծնող	AU0590099	5407890615	220062913169000	6.300
8.	Հարությունյան	Արտակ	Մարզիչ	AS0351292	3209790272	1510037597440200	7.100
Ընդամենը							51.200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2860Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-12 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2026-2027 թվականների առաջնության 2026 թվականի հոկտեմբերի 10–ին Երևան քաղաքում կայանալիք 1-ին տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 6–ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին գործուղման ծախսերի 2026 թվականի հոկտեմբերի 10–ին Երևան քաղաք գործուղել 11 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 76.400(յոթանասունվեց հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հոկտեմբերի 06 N 836-Ա որոշման



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Հովհաննիսյան Հովհաննիսյան	Հովհաննես Արթուր	Մարզիկ ծնող	AN0798142	3301830803	2472606665700000	6.300
2.	Մանուկյան Մանուկյան	Դավիթ Նարա	մարզիկ ծնող	AS0385059	7212760307	2050155708027001	6.300
3.	Ղրջյան Ղրջյան	Արման Ալիդա	մարզիկ ծնող	AT0314767	5704830269	11802016269900	6.300
4.	Շումկովա Շումկովա	Գրիգորի Նատալյա	մարզիկ ծնող	531264253	5711800892	2053154097841001	6.300
5.	Կարապետյան Ղուկասյան	Խաչիկ Մարինա	ծնող	AU0279435	6210880789	220060667163000	6.300
6.	Մխիթարյան Մխիթարյան	Գեղամ Մարտին	Մարզիկ ծնող	AP0618924	1707820499	2470052928980010	6.300
7.	Հակոբյան	Մաքս	մարզիկ	AL0294388	1628150122	11802054748500	6.300
8.	Հովհաննիսյան Հովհաննիսյան	Սամվել Անդրանիկ	մարզիկ ծնող	AL0208552	1107910781	220061255265000	6.300
9.	Մելքոնյան Համբարյան	Նարեկ Մելինե	մարզիկ ծնող	AR0418716	7108910428	2623420512041001	6.300
10.	Ոսկանյան Սահրադյան	Արտակ Լիլիթ	մարզիկ ծնող	AS0588906	6211870302	11802065877900	6.300
11.	Գովդի Մելքոնյան	Մարկ Թեհմինե	մարզիկ ծնող	AT0693775	6703850038	2623475461251001	6.300
12.	Հարությունյան	Արտակ	Մարզիչ	AS0351292	3209790272	1510037597440200	7.100
Ընդամենը							76.400

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 07 » հունվարի 2026 թվականի N 286-Ա

ԱՐՏՅՈՄ ՌԱԶՄԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Յակուտիայի հայ համայնքի զարգացման, ազգային ավանդույթների պահպանման, հայապահպանության գործում ներդրած նշանակալի ավանդը և ակտիվ հասարակական-բարեգործական գործունեությունը, Գյումրի քաղաքի ճանաչելիության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի անունը տարբեր հարթակներում արժանապատվորեն ներկայացնելու և քաղաքի մշակութային արժեքների, պատմական ժառանգության հանրահռչակման գործում համագործակցության հնարավորությունների ընդլայնմանն ուղղված գործունեությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Արտյոմ Ռազմիկի Ավետիսյանին պարգևատրել Գյումրի համայնքի ոսկե հուշամեդալով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Ռազմիկի Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
համայնքի ղեկավարին փոխարինող

2026 թ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 2862-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 33/5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 685,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 210,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտակ Գևորգի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 33/5 հասցեի բնակելի տան հողամասին կից 685,3 (վեց հարյուր ութսունհինգ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 210,3 (երկու հարյուր տասն ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն, որի 42,8 (քառասուներկու ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հատվածն անավարտ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արտակ Գևորգի Սարգսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2026NDVCQ2 տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 10գ հասցեի բնակելի տանը կից Ղարսի խճուղի N 33/5 հասցեի բնակելի տան հողամասին կից 685,3 (վեց հարյուր ութսունհինգ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 210,3 (երկու հարյուր տասն ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Արտակ Գևորգի Սարգսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արտակ Գևորգի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 2863-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 80 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 88,2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 390,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 80 հասցեի 390,0 (երեք հարյուր իննսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է 88,2 (ութսունութ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Անդրանիկ Ալբերտի Հարությունյանը:

Քաղաքացի Անդրանիկ Ալբերտի Հարությունյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Ալբերտի Հարությունյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 01-ին N 15617 թվագրմամբ),

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Անդրանիկ Ալբերտի Հարությունյանի (ծնված 1966 թվականի հունիսի 27-ին) սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 80 հասցեի 390,0 (երեք հարյուր իննսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 88,2 (ութսունութ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անդրանիկ Ալբերտի Հարությունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2026-10-07 11:12:12 GMT+4
Ստորագրված է ԵԿԵՆԳ-ի կողմից

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2864-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի N 2354-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի N 1 հասցեի շենքի հարևանությամբ 33,2 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 66,4 քառակուսի մետր արտաքին, 46,3 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 2354-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի N 1 հասցեի շենքի հարևանությամբ 33,2 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 66,4 քառակուսի մետր արտաքին, 46,3 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 2354-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Վերնագրում «33,2» թիվը փոխարինել «27,5» թվով,
   2) Նախաբանում և որոշման 1-ին կետում «33,2 (երեսուներեք ամբողջ երկու տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «27,5 (քսանյոթ ամբողջ հինգ տասնորդական)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N2865-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԶԱՐԵ ՄԿՐՏՉԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԵՎՈՆ ՄԱՐՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ 111 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 34.54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Զարե Մկրտչի Սահակյանին ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում թիվ 7839, ժառանգական գործ 8321) Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան 111 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 34,54 (երեսունչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Զարե Մկրտչի Սահակյան դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և և հիմք ընդունելով քաղաքացի Զարե Մկրտչի Սահակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 09-ին N 9480 թվագրմամբ), **որոշում եմ.**

1. Քաղաքացի Զարե Մկրտչի Սահակյանին պատկանող Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան 111 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 34,54 (երեսունչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Զարե Մկրտչի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Восстановимая подпись
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«__07__» __հոկտեմբերի__ 2026 թվականի N__2866-__Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 941-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 28-ի N 941-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը(փաստաթղթի համար՝ Կ-28092026-08-0243), և 10/11/2023 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված գրանցամատյանում թիվ 8089) **որոշում եմ՝.**

1. 2021 թավականի ապրիլի 28-ի «Քաղաքացի Թելլո Արմենակի Իկնատոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N65 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 74,57 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 26,67 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 941-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում, որոշման նախաբանում և որոշման 1-ին և 2-րդ կետերում «Թելլո Արմենակի Իկնատոսյան» բառերը փոխարնել «Արթուր Այդինի Վտոյան» բառերով.
   2) Որոշման 1-ին կետում «(ծնված 1942 թվականի մարտի 08-ին)» թվերը և բառերը փոխարինել «(ծնված 1974 թվականի հունիսի 29-ին)»
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Այդինի Վտոյանի լիազորված անձ Արմեն Փահլևանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

X

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՆԻԿՈԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«07»«հոկտեմբերի» 2026 թվական N 2867-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2026 թվականի հոկտեմբերի 05-ին, ժամը 16:30-ին, Գյումրի քաղաքում, դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանի (նույնականացման քարտ 008942294, տրված՝ 2016 թվականի հուլիսի 11-ին , 016-ի կողմից, հասցե՝ ք. Գյումրի, Շիրակացի 20բ շենք բն.4) ներկայությամբ, Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Մետաքսյա Եդիգարյանի և Արմեն Մովսիսյանի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 22–ին կազմած վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքի՝ 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցները՝ Մետաքսյա Եդիգարյանը և Արմեն Մովսիսյանը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2026 թվականի սեպտեմբերի 22–ին հայտնաբերել և վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել է քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանի կողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն, համաձայն, որի

վերջինիս կողմից Գյումրի քաղաքի՝ Շիրակացի 20բ շենքի հարավային հատվա համայնքապատկան հողամասի վրա կատարվել է ինքնակամ շինարարակ աշխատանքներ, առանց համապատասխան թույլտվության, զավթելով համայնքապատկա հողամաս :

Քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, որը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2026 թվականի սեպտեմբերի 22-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանը մեկամսյա ժամկետում պարտավորվում է վերացնել իր կողմից կատարված վարչական իրավախախտման հետևանքները:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Նախազգուշացումը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 25-րդ հոդվածով, և կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր առաջին անգամ են կատարել վարչական զանցանք և դրական են բնութագրվում:

Օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ամբողջությամբ հաստատված եմ համարում, որ քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանի թույլ է տվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, 287-րդ հոդվածի 3-րդ կետով, 48-րդ հոդվածի , 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55÷րդ, 58–րդ հոդվածի 1–ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, հոդվածներով, 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների 23 հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով՝ նախազգուշացում :

2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանին մեկամսյա ժամկետում վերացնել իր իսկ կողմից կատարած վարչական իրավախախտման հետևանքները:

3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանին :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Գևորգ Վլադիմիրի Նիկոլյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող՝ **Ա. Առաքելյան**

Կատ.՝ իրավաբանական բաժին
Մ.Շարոյան
2026թ.,ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N2868-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 27-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2026 թվականի նոյեմբերի 11-ին, ժամը 11:00-ին ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին.

1) օրենքով սահմանված կարգով՝

ա. կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

բ. սահմանված կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի վերաբերյալ հայտարարության հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, դեկտեմբերի 7, Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՐՑԱԹԵՐԹ

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2026 թվականի հունվարի 9-ի
N 2868-Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) մասին

N	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) տեսակը	Պատճառը (սահմանափակման հիմքը)	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) ծավալը	Սահմանափակումներ (ծանրություններ) կրող հողամասի նկարագրությունը	Սահմանափակումներ (ծանրություններ) կրող հողամասի նկատմամբ պահանջվող հատուկ պայմանները	Սահմանափակումներ (ծանրություններ) կրող հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) ենթակա անձանց շրջանակը
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ					
1.1-1	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ

Սահմանափակման (ծանրության) ենթակա հողամասի նկատմամբ իրավունք ունեցող անձանց վերաբերյալ տեղեկություններ

Իրավունքի տեսակը	Անվանումը (անունը, ազգանունը)	Գտնվելու վայրը (հասցեն)	Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն
Սեփականության իրավունք	1) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասեր	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի համայնք	

Սահմանափակման (ծանրության) ենթակա հողամասի նկատմամբ իրավունք ունեցող անձանց համար սահմանափակումների (ծանրությունների) առաջացման հետևանքները

Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) առաջացման հետևանքները	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) առաջացման հետևանքները կանխելու կամ վերացնելու համար անհրաժեշտ միջոցառումները	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) առաջացման հետևանքները կանխելու կամ վերացնելու համար անհրաժեշտ միջոցառումների ժամկետները	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ծանրությունների) առաջացման հետևանքները կանխելու կամ վերացնելու համար անհրաժեշտ միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները
Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ	Վերելակների տեղադրման նպատակով նախատեսվող վերելակային փոսերի տեղադրման վերաբերյալ

			7) Համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները, 8) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը, 9) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշման հիման վրա օրենքով սահմանված ժամկետում ընդունում է տվյալ համայնքային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում, 10) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհում, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում զրկում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի ու Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճանները, 11) իր կողմից համայնքային ծառայության դասային աստիճան շնորհած աշխատակազմի համայնքային ծառայողին օրենքով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատելու հետ միաժամանակ իր հրամանով զրկում է նաև տվյալ դասային աստիճանից, 12) օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում, 13) համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր հայեցողությամբ որոշում է աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոնները փոխարինող համայնքային ծառայողների կողմից զբաղեցնելու հարցը, 14) օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համայնքային ծառայության կադրերի ռեզերվում	«Քաղաքաշինության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Հինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշման, աշխատակազմի կանոնադրության, և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 5) տիրապետում է ռուսերենին (ազատ):	

			գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր, 15) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր. 16) աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալու դեպքում իր ընդունած իրավական ակտով թույլատրում է համայնքային ծառայողին շարունակել պաշտոնը զբաղեցնել մինչև մեկ տարի ժամկետով, 17) կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները, 18) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում նրա որոշումներն ու կարգադրությունները, 19) աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները. իա) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ, 20) համայնքի ղեկավարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին, 21) իրեն անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների մասին տալիս է համապատասխան եզրակացություններ, 22) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը, 23) ապահովում համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը, 24) կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը, 25) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը, 26) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը, 27) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների,		

			դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ, 28) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ, 29) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում, 30) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ, 31) անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, 32) տեխնիկական սպասարկման կազմի ղեկավարման և կազմակերպման մասով քաղաքապետարանի կանոնադրությամբ սահմանված ունի լիազորություն կնքելու աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև դրանք լուծելու, վերջիններիս նկատմամբ խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր կիրառելու, 33) իրականացնում է գաղտնի փաստաթղթերի հաշվառման և պահպանման, գաղտնի գործավարության վարման աշխատանքները, 34) ապահովում է գաղտնիության ռեժիմի միջոցառումների իրականացման աշխատանքները: Աշխատակազմի ղեկավարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ: Ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 524.000 (հինգ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ:		
Մրցույթն անցկացնելու օրը, ժամը, վայրը			**Փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը**
օրը՝ 2026 թվականի նոյեմբերի 11 ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ			**Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18, էլեկտրոնային փոստի հասցե՝ ashxatakazmgyumri@mail.ru), ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից**		**Մինչև 2026 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 2869 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված ուղեցույցի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա որոշումն՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդով օտարելու համար հայտարարել երկրորդ էլեկտրոնային աճուրդ՝ որոշմամբ սահմանված անշարժ գույքերի սկզբնական մեկնարկային գնի 85 տոկոսի չափով, որը կկայանա 2026 թվականի նոյեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 26-ը ներառյալ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-07 17:13:42 GMT+4
Հայաստանի էկենգի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 07
N 2369-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գյումրի համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 23-ի ժամը 11⁰⁰-ից մինչև նոյեմբերի 26-ը ներառյալ ժամը 11⁰⁰: https:/ /www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա որոշման համաձայն օտարման ենթակա ներքոհիշյալ անշարժ գույքերը

Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը (հասցե)	Լոտի կադաստրային ծածկագիրը	Շինության ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Հողամասի ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Անշարժ գույքի գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Լոտի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Նախավճարի չափը (ՀՀ դրամ)
1.	Հ. Թումանյան փողոց N 15/2	08-001-0767-0037	87.3	56.6	6 292 000	5 348 370	
2.	Արագածի 4-րդ թաղամաս N 15/3	08-001-0174-0004	500.0	98.94	2 388 000	4 060 025	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան /հասցեն՝ ք.Գյումրի, Վարդանանց հր. 1, 0312 2.22.29/: համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդին մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք

- Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով (www.e-auctions.am) էլեկտրոնային համակարգում, գրանցումը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի:
- Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (www.e-auctions.am) գրանցվելուց և մուտք գործելուց հետո e-payments համակարգի միջոցով ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճարը:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու պահանջվող փաստաթղթերը աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը առցանց եղանակով փոխանցում է կազմակերպիչին, արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաղթողը պարտավոր է փոխանցել լոտի գինը ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ 900215301574 հաշվեհամարին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հունվարի 2026 թվականի N 2870-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-101/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<ղ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-101/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Միկրովտորուսների ապահովագրության» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել.

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Արտյոմ Մկրտչյան – Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման անդամ՝ Արմեն Հակոբյան - Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի գլխավոր ավտոմեխանիկ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հունվարի 2026 թվականի N 2871-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-101/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ»համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-101/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Ավտոմեքենաների ապահովագրության» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան–Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3)Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

4) Դավիթ Հարությունյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

5) Վարդան Զարիֆյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2872-Ա

«ՏՐԻՊԼ ՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 25-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 02-ին 17659-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում՝ ավտոբուսային կանգառներին տեղադրել (տեղաբաշխել) գովազդային պաստառներ՝ ընդհանուր 352 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 25-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նորայր Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. **ք. Գյումրի**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2026 թ. հունվարի 07
N 2872-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Տերյան փողոց 1 ռեստորանի հարևանությամբ, ՎԼՎ էլեկտրոնային խանութի դիմաց	1	7
2	Տերյան փողոց 2 Գյումրու ազգային ճարտարապետության քաղաքաշինության թանգարանի հարևանությամբ	1	7
3	Տերյան փողոց 3 Գյումրու ազգային ճարտարապետության և քաղաքային կյանքի թանգարանի դիմաց	1	9
4	Վազգեն Սարգսյան 4 ՀՊՏՀ ԳԲ-ի դիմաց	1	9
5	Վազգեն Սարգսյան 5 ՀՊՏՀ ԳԲ-ի դիմաց	1	9
6	Վազգեն Սարգսյան 6 Բռնցքամարտի դպրոցի և Ամերիաբանկի հարևանությամբ	1	9
7	Երկաթուղու կայարան 1 շինանյութի խանութի հարևանությամբ	1	9
8	Երկաթուղու կայարան 2	1	9
9	Տիրգրան Մեծ 5 սուպերմարկետի դիմաց	1	9
10	Պարույր Սևակ	1	9
11	Պարույր Սևակ (եկեղեցու դիմաց)	1	9
12	Գորկու փողոց (10-րդ դպրոցի կողքին)	1	9
13	Տիգրան Մեծ 4 (Գվուզ ռեստորանային մոտ)	1	7
14	Տիգրան Մեծ 3 (Գվուզ ռեստորանային դիմաց)	1	7
15	Տիգրան Մեծ 2 (տեխնիկայի քոլեջի դիմաց)	1	7
16	Տիգրան Մեծ 1 (տեխնիկայի քոլեջի կանգառ)	1	7
17	Շիրակացի 5 (Վեգա էլեկտրոնիքս խանութի մայթին)	1	14
18	Գարեգին Նժդեհ 2 (դատարանի շենքի կողքին և Կումկումա ռեստորանի ոլորանին)	1	9
19	Կարս 1 (Մայր Հայաստանի արձանի աստիճանների կողքին)	1	9
20	Կարս 2 (Մայր Հայաստանի արձանի աստիճանների կողքին)	1	9
21	Գարեգին Նժդեհ 4 (Բարեկամության զբոսայգու գլխավոր մուտքի դիմաց)	1	9
22	Երևանյան խճուղի 1գարեջրի գործարանի կողքին	1	9
23	Երևանյան խճուղի 2 մեծ անիվ խանութի կողքին	1	9
24	Երևանյան խճուղի 3 ունիվերսամի և ռեստորանի կողքին	1	9
25	Երևանյան խճուղի 4 սուպերմարկետի կողքին	1	9
26	Երևանյան խճուղի 5 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ	1	9
27	Երևանյան խճուղի 6 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ	1	9
28	Երևանյան խճուղի 7 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ	1	9
29	Երևանյան խճուղի 8 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ	1	9
30	Վազգեն Սարգսյան 3 զինվորական դատախազության և թիվ 19 դպրոցի հարևանությամբ	1	9
31	Ջիվանի փողոց 1	1	14
32	Ջիվանի փողոց 2	1	9
33	Բագրատունյաց հրապարակ	1	14
34	Անկախության փողոց	1	24
35	Հաղթանակի պողոտա	1	28
	Ընդամենը	35	352

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2873-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ (ԼԵՆԻՆԱԿԱՆԻ) ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ №9 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Կիրակոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16391-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Ժողովրդական պատգամավորների Գյումրու (Լենինականի) քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հոկտեմբերի 29-ի նիստի №9 արձանագրությամբ անհատական շինարարություն իրականացնելու համար քաղաքացի Անդրանիկ Կիրակոսյանին հատկացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Արևմտյան շրջանցող փողոց, 3 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անդրանիկ Կիրակոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2879-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ (ԼԵՆԻՆԱԿԱՆԻ) ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ №9 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Պետրոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16387-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Ժողովրդական պատգամավորների Գյումրու (Լենինականի) քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հոկտեմբերի 29-ի նիստի №9 արձանագրությամբ անհատական շինարարություն իրականացնելու համար քաղաքացի Արմեն Պետրոսյանին հատկացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Արևմտյան շրջանցող փողոց, 5/1 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Պետրոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2875-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի №2653-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1999-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 17-ի №2653-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի տանը և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կոմինտեռնի փողոց, 3/24 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հունվարի 2026 թվականի №2876-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի №2790-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/2133-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 30-ի №2790-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված կիսակառույց բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ս. Մատնիշյան փողոց, կիսակառույց	**44/8**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» հունվարի 2026 թվականի N 2877 Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԶԻՐՈՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԵՆԻ ԶԻՐՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԱՏԻ ՓՈՂՈՑ 22 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 81,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 173,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Կարինե Հովհաննեսի Զիրոյանին և Սամվել Սուրենի Զիրոյանին պատկանող (հիմք՝ բնակելի տան սեփականության իրավունքի վկայական N 03102025-08-0038) Գյումրի քաղաքի Մարատի փողոց 22 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 81,7 (ութսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 173.5 (մեկ հարյուր յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա է շինություններ, որոնք հաշվառված են ՀՀ կադաստրի կոմիտեում 2025BPFFEC ծածկագրով::

Քաղաքացիներ Կարինե Հովհաննեսի Զիրոյանը և Սամվել Սուրենի Զիրոյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն և կից ավել օգտագործվող հողամասը օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով , 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, և հիմք ընդունելով քաղաքացի Կարինե Սամվելի Զիրոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունվարի 23-ին N 905 թվագրմամբ),

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Կարինե Հովհաննեսի Զիրոյանին և Սամվել Սուրենի Զիրոյանին պատկանող Գյումրի քաղաքի Մարատի փողոց 22 հասցեի բնակելի տան օրինական հողամասում

ինքնակամ կառուցված 81,7 (ութսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

2. Ճանաչել քաղաքացիներ Կարինե Հովհաննեսի Զիրոյանի (ծնված 1959 թվականի հունվարի 27-ին) և Սամվել Սուրենի Զիրոյանին (ծնված 1988 թվականի մայիսի 30-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մարատի փողոց 22 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 173.5 (մեկ հարյուր յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Կարինե Հովհաննեսի Զիրոյանին և Սամվել Սուրենի Զիրոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հունվարի 2026 թվականի N 2878-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ԼԵՌՆԻԿԻ ԶՈՒՐՆԱՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ. ԴԱՇՏԵՆՑԻ ՓՈՂՈՑ 76 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 40,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հակոբ Լեռնիկի Զուրնաչյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր գրանցված գրանցամատյանում թիվ 6512 ժառանգական գործ 934) Գյումրի քաղաքի Խ. Դաշտենցի (նախկին Կրուպսկայա փողոց) փողոց 76 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 40,5 (քառասուն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են ՀՀ Կադաստրի Կոմիտեում 20265PXM4G ծածկագրով:

Քաղաքացի Հակոբ Լեռնիկի Զուրնաչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով , 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, և հիմք ընդունելով քաղաքացի Հակոբ Լեռնիկի Զուրնաչյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 05-ին N 8249 թվագրմամբ),

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Հակոբ Լեռնիկի Զուրնաչյանին պատկանող Գյումրի քաղաքի Խ. Դաշտենցի փողոց 76 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 40,5 (քառասուն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հակոբ Լեռնիկի Զուրնաչյանի պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» հոկտեմբերի 2026 թվականի N 2879-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՒԶՆԵՑՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 68,36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 68,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (56,25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կուզնեցովի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 68,36 (վաթսունութ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 68,35 (վաթսունութ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (56,25(հիսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026RZAXYP ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Կուզնեցովի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 68,36 (վաթսունութ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 68,35 (վաթսունութ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (56,25(հիսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Անի Կոլյայի Ստեփանյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ԺՈՐԺԻԿ ԵՐՋԱՆԻԿԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«08»«Հոկտեմբերի» 2026 թվական N 2880 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2026 թվականի հոկտեմբերի 06-ին, ժամը 16:00-ին, Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի (նույնականացման քարտ՝ 012743720, տրված՝ 2020 թվականի հունիսի 01-ին , 064-ի կողմից, հասցե՝ ք. Գյումրի,Մայակովսկու փող. 114) բացակայությամբ, Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Մետաքսյա Եդիգարյանի և Դավիթ Գրիգորյանի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 18-ին կազմած վարչական իրավախախտումների վերաբերյալ (այսուհետ՝ Օրենսգիրք) Հայաստանի Հանրապետության Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Դ.Գրիգորյանի և Մ.Եդիգարյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2026 թվականի սեպտեմբերի 18-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2026 թվականի սեպտեմբերի 18-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի կողմից Գյումրի քաղաքի, Կազաչի պոստ թաղամասի 3 շենքի 1-ին [illegible]

աշխատանքներ,առանց համապատասխան թույլտվության, մասնավորապես պատուհ
դարձրել է դուռ: Նշված հասցեն հուշարձան շենք է և գտնվում է «Կումայր
պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտում, արարքը նախատեսված է
օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է փոստային առաքման միջոցով: Քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2026 թվականի սեպտեմբերի 18-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Վարչական վարույթի լսումները անցկացվել են քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի բացակայությամբ :

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու. կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի «ե» կետի համաձայն հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնում են շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վտանգում են կամ կարող են վտանգել հուշարձանի ու դրա պահպանական գոտու անվթարությունը և այդ մասին տեղեկացնում լիազորված մարմնին:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Նկատի ունենալով վերոգրյալը ամբողջությամբ հաստատված եմ համարում, որ քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանը թույլ է տվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկի՝ 750.000 /յոթ հարյուր հիսուն հազար / Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանին սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Պարտավորեցնել քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանին չկատարել որևէ շինարարական աշխատանքներ՝ մինչև օրենքով սահմանված կարգով շինարարական թույլտվություն ստանալը:
4. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից :
6. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
7. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Ժորժիկ Երջանիկի Ղարիբյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 368 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարութան հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող՝ Ա. Առաքելյան

2026թ.,ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2881-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի №2674-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2084-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 18-ի №2674-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց, 51/27 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2882-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԻՍ ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ №1395845) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալիս Բաբախանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17668-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հարավարևելյան շրջանցող ճանապարհ, 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող քաղաքացի Ալիս Բաբախանյանին պատկանող անշարժ գույքին (վկայական №1395845) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հարավարևելյան շրջանցող ճանապարհ, 1-ին նրբանցք, 14/3 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալիս Բաբախանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2883-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ. ԿՈՉՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 28.14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0457-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/1902-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խ. Կոչտոյան փողոց, 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող 28.14 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0457-0001-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաքխ. Կոչտոյան փողոց, 1-ին նրբանցք, 4/1 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի №2884-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՐԱԼԲԵՐԳԻ ՓՈՂՈՑ 2/34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №06082026-08-0040) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Պապոյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16665-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՐՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց 2/34 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №06082026-08-0040) երեք մասերի բաժանելու նպատակով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.

1) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված առաջին հատվածը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ֆորալբերգի փողոց, 2/34 բնակելի տուն

2) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված երկրորդ հատվածը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ֆորալբերգի փողոց, 2/37 բնակելի տուն

3) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված երկրորդ հատվածը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ֆորալբերգի փողոց, 2/38 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Պապոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հունվարի 2026 թվականի №2885-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ (ԼԵՆԻՆԱԿԱՆԻ) ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ №9 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գարեգին Հարությունյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16384-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Ժողովրդական պատգամավորների Գյումրու (Լենինականի) քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հոկտեմբերի 29-ի նիստի №9 արձանագրությամբ անհատական շինարարություն իրականացնելու համար քաղաքացի Գարեգին Հարությունյանին հատկացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Արևմտյան շրջանցող փողոց, 3/1 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գարեգին Հարությունյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 թվականի № 2886-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ (ԼԵՆԻՆԱԿԱՆԻ) ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ №9 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԷԼՅԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Էլյա Առաքելյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17022-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Ժողովրդական պատգամավորների Գյումրու (Լենինականի) քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հոկտեմբերի 29-ի նիստի №9 արձանագրությամբ անհատական շինարարություն իրականացնելու համար քաղաքացի Էլյա Առաքելյանին հատկացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Արևմտյան շրջանցող փողոց, 1/2 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էլյա Առաքելյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» հոկտեմբերի 2026 թվականի N 2887-Ա

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ՏՐՎԱԾ ՆՇԹ/926/29630-26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթուր Ավետիսյանին Գյումրի քաղաքի Խ. Կոշտոյան փողոց 18/13 հասցեում բազմագործառույթ օբյեկտի կառուցման աշխատանքների կատարման համար 2026 թվականի հունիսի 8-ին տրվել է ՆՇԹ/926/29630-26 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արթուր Ավետիսյանի դիմումը(մուտքագրված համայնքապետարանում 25.09.2026թ. N17186 թվագրմամբ) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2026 թվականի հունիսի 8-ին տրված ՆՇԹ/926/29630-26 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» հոկտեմբերի 2026 թվականի N 2888-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 27-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2026 թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 11:00-ին ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին.

1) օրենքով սահմանված կարգով՝

ա. կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

բ. սահմանված կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի վերաբերյալ հայտարարության հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2026.10.08 17:30:37 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի
2026 թվականի հոկտեմբերի 8-ի N 2888 -Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

N	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Պաշտոնի անձնագրի ծածկագիր	Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ	2.1-4	Բաժնի պետը՝ 1) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը, 2) համայնքի ղեկավարին է ներկայացնում բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ, 3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, 4) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը, 5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը, 6) աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը, 7) կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում համայնքի ղեկավարին,	Բաժնի պետը՝ 1)ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ 2)ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Քաղաքաշինության մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 5) տիրապետում է ռուսերեն լեզվին (ազատ):	**Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/. 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմի) և աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթերի պատճենները. 3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**

8) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում է այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը,

9) իրականացնում է բաժնի գործառույթներին առնչվող հանրային իրավահարաբերությունների ոլորտում վարչական ակտերի ընդունման գործընթացում քաղաքապետի և նրա տեղակալների ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հարուցված վարչական վարույթների լսումների կազմակերպման և վարչական վարույթի ընթացիկ փուլի ապահովման աշխատանքները,

10) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վերահսկում է համայնքի գլխավոր հատակագծի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և այլ փաստաթղթերի կազմման համար անհրաժեշտ աշխատանքների կատարումը,

11) սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական նախագծեր և ներկայացնում համայնքի ղեկավարին,

12) իրականացնում է աշխատանքներ համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի, համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների, ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտության դեպքում առաջարկելով կատարել դրանց վերանորոգման կամ նոր ենթակառուցվածքների կառուցման աշխատանքներ,

13) իրականացնում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով,սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքի սեփականություն համարվող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ աշխատանքներ և ներկայացնում համայնքի ղեկավարին,

14) սահմանված կարգով օգտագործման տրամադրվող և օտարվող հողամասերի մեկնարկային վարձավճարների ու գների սահմանման նպատակով կատարում է ուսումնասիրություններ և ներկայացնում առաջարկություններ,

15) իրականացնում է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման,հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և օրենքով սահմանված կարգով ներկայացնում համայնքի ղեկավարին,

16) սահմանված կարգով վերահսկում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ

			հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները, 17) սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին, 18) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի ղեկավարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փոստաթղթերի,պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր,կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին, 19) կատարում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալների և աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, նախատեսված այլ աշխատանքներ, 20) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 446.000 (չորս հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ:		
	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ	2.1-12	Բաժնի պետը՝ 1) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը, 2) ղեկավարին է ներկայացնում բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ, 3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի և (կամ) ղեկավարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, 4) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը,	Բաժնի պետը՝ 1) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ 2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գնումների մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ	**Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/. 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմի) և աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթերի պատճենները. 3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/.

			5) համայնքի ղեկավարի և (կամ) ղեկավարի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը, 6) ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը, 7) կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի ղեկավարին, 8) աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում է այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը. 9) վերահսկում է համայնքային ենթակայության մարզական կազմակերպությունների գործունեության կազմակերպումն ու կառավարման համար անհրաժեշտ աշխատանքները, 10) վերահսկում է համայնքային ենթակայության մարզական կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ գույքային և շենքային պայմանները և ներկայացնում առաջարկություններ գույքի ձեռքբերման ու շենք-շինությունների հատկացման, կառուցման ու վերանորոգման վերաբերյալ, 11) համայնքի ղեկավարին ներկայացնում է համայնքային ենթակայության մարզական կազմակերպությունների գործունեության վիճակի վերաբերյալ տեղեկատվություն, նախապատրաստում է այդ հաստատություններում գործունեության իրականացման, կազմակերպման, բարելավման վերաբերյալ առաջարկություններ, դրանց աշխատակիցներին տրամադրում է մեթոդական օգնություն և օժանդակում սեմինարների կազմակերպմանը, 12) ներկայացնում է առաջարկություններ Հայաստանի Հանրապետության առաջնություններում մասնակցելու համար հավաքական թիմերի կազմավորման վերաբերյալ, վերահսկում է առաջնությունների, մրցաշարերի, հուշամրցաշարերի և այլ մասսայական մարզական միջոցառումների անցկացման աշխատանքները, 13) մշակում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված ծրագրեր և վերահսկում դրանց իրագործումը, 14) ուսումնասիրում է համայնքի բնակչության պահանջմունքները և կատարում սպորտային հրապարակների ու մարզական այլ կառույցների շինարարության և հանգստի գոտիների ստեղծման առաջարկություններ, 15) աջակցում է քաղաքում պրոֆեսիոնալ սպորտի	իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 5) տիրապետում է ռուսերեն լեզվին (ազատ):	5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**

			զարգացմանը, 16) վերահսկում է առաջնությունների և միջազգային մրցաշարերին մարզիկների մասնակցության կազմակերպման աշխատանքները, 17) նախապատրաստում է համայնքի ղեկավարի կողմից կոչումներ, պարգևատրումներ, մրցանակներ, պատվոգրեր՝ ֆիզկուլտուրայի և սպորտի ոլորտի անձանց համար, 18) քաղաքի մարզական կազմակերպությունների շահերը ներկայացնում է միջազգային մարզական և երիտասարդական պաշտոնական կազմակերպություններում ՝ քաղաքապետի կողմից տրված լիազորությունների հիման վրա, 19) կատարում է ոլորտում իրականացվող աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ աշխատանքներ, 20) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի ղեկավարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր, կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին, 21) կատարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով նախատեսված այլ աշխատանքներ, 22) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 446.000 (չորս հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ:		
Մրցույթն անցկացնելու օրը, ժամը, վայրը			**Փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը**
օրը՝ 2026 թվականի նոյեմբերի 19 ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ			**Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18, էլեկտրոնային փոստի հասցե՝ ashxatakazmgyumri@mail.ru), ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից**		**Մինչև 2026 թվականի հոկտեմբերի 22-ը ներառյալ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2026 ԹՎԱԿԱՆԻ N 2889 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն.ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 328 ՀԱՍՑԵԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ն.Ղորղանյան փողոց 328 հասցեի արտադրամասը սեփականության իրավունքով պատկանում է Կոլյա Գևորգի Ղուկասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17062026-08-0019 վկայական), համաձայն անշարժ գույքի առուվաճառքի թիվ 14718 պայմանագրի պատկանում է Գրիգոր Վանոյի Գալստյանին:

Գրիգոր Վանոյի Գալստյանի լիազոր անձ Վռամ Սամվելի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին Գյումրի քաղաքի Ն.Ղորղանյան փողոց 328 հասցեի 242,62 (երկու հարյուր քառասուներկու ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով արտադրամասի գործառական նշանակությունը որպես առևտրի և սպասարկման օբյեկտի փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և քաղաքացի Արաքսյա Ղևոնդյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 6-ին N 13984 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Ն.Ղորղանյան փողոց 328 հասցեի 242,62 (երկու հարյուր քառասուներկու ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով արտադրամասի գործառական նշանակությունը որպես առևտրի և սպասարկման օբյեկտի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Գրիգոր Վանոյի Գալստյանի լիազոր անձ Վռամ Սամվելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 2890-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 14 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի 6-րդ նրբանցքի N 14 հասցեի բնակելի տունը և 137,4 (մեկ հարյուր երեսունյոթ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-0354-0049 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ալվարդ Վոլոդյայի Մելքոնյանին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2842587 վկայական):

Նշված բնակելի շինությունը և հողամասը նախկինում չափագրման ժամանակ սխալ քարտեզագրման և տեղակապման պատճառով կադաստրային քարտեզում տեղադրվել ոչ ճիշտ տեղադիրքով, որի արդյունքում այն համադրվում է 08-001-1965-0001 կադաստրային ծածկագրերով ճանապարհի հետ, սակայն փաստացի վերը նշված հասցեի անշարժ գույքն ընդհանուր օգտագործման ճանապարհ չի հանդիսանում և ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ իսկ պատճառով առաջացել է հողամասի տեղադիրքի և սահմանների ճշտման անհրաժեշտություն:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված կողմնային չափերով և տեղադիրքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 2-րդ հավելվածի 30-րդ կետի 2-րդ ենթակետի, 31-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել անհատ ձեռնարկատեր «Արսեն Նուրիջանյան»-ի կողմից կազմված, քաղաքացի Ալվարդ Վոլոդյայի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի 6-րդ նրբանցքի N 14 հասցեի բնակելի տան և 129,3 (մեկ հարյուր քսանինն ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-0354-0049 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի տեղադիրքը և հատակագիծը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2891-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 03-Ի N 1023-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց 2-րդ նրբանցքի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 45.23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 87.1 քառակուսի մետր արտաքին (75.35 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 1023-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց 2-րդ նրբանցքի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 45.23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 87.1 քառակուսի մետր արտաքին (75.35 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 1023-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
   1) Նախաբանի 10-րդ տողում «կետի» բառից հետո լրացնել «և հիմք ընդունելով ինքնակամ շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու վերաբերյալ 2026YHYVLE տեղեկանքը» թվերը և բառերը,
   2) Վերնագրում «45.23», «87.1» և «75.35» թվերը համապատասխանաբար փոխարինել «83,74» թվով,
   3) նախաբանում և որոշման 1-ին կետում «45.23(քառասունհինգ ամբողջ քսաներեք հարյուրերորդական)», «87.1(ութսունյոթ ամբողջ մեկ տասնորդական)» և «75.35(յոթանասունհինգ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)» թվերը և բառերը համապատասխանաբար փոխարինել «83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)», «83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)» և «71,99 (յոթանասունմեկ ամբողջ իննսունինը հարյուրերորդական)» թվերով և բառերով,
   4) Որոշման 1-ին կետում «հողամասը» բառը փոխարինել «ընդհանուր օգտագործվող 83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասից 41,87 (քառասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը» թվերով և բառերով,
   5) Որոշման մեջ լրացնել նոր կետ հետևյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց 2-րդ նրբանցքի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր օգտագործվող հողամասի մյուս 41,87 (քառասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը թողնել առաջին հարկում առկա շինության կառուցման ու սպասարկման համար զբաղեցված հողամաս»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2026-10-09 11:47:28 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2892 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՎԵԼ ՆԱՊՈԼԵՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 75/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 93,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոց N 75/4 հասցեով (ծածկագիր 08-001-0301-0051) 93,0 (ինսուներեք) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Մանվել Նապոլեոնի Խաչատրյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 01 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոց N 75/4 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 93,0 (ինսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0301-0051) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Մանվել Նապոլեոնի Խաչատրյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Մանվել Նապոլեոնի Խաչատրյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Մանվել Նապոլեոնի Խաչատրյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մանվել Նապոլեոնի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2893 -Ա

«ԲԵԼԻՍԻՄՈ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ.ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 169/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 257,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց N 169/12 հասցեով (ծածկագիր 08-001-1010-0128) 257,5 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

«ԲԵԼԻՍԻՄՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ի դեմս գործադիր մարմնի ղեկավար Երվանդ Փայլակի Ջեյրանյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 3486000 (երեք միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 01 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց N 169/12 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 257,5 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1010-0128) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված «ԲԵԼԻՍԻՄՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել «ԲԵԼԻՍԻՄՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի «ԲԵԼԻՍԻՄՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԲԵԼԻՍԻՄՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 10:06:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N2894-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՏՐՎԱԾ N113/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ֆրիդըմ Լավինգ Յութ» բարեգործական հիմնադրամ ՀՄԴ-ին Գյումրի քաղաքի Անտառավան 5-րդ թաղամաս 58/2 հասցեով հողամասում վարչական շենքի նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2024 թվականի սեպտեմբերի 30-ին տրվել է N113/24 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արմինե Մարտիրոսյանի դիմումը(մուտքագրված համայնքապետարանում 01.10.2026թ. 17569 թվագրմամբ) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի սեպտեմբերի 30-ին տրված N113/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմինե Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N2895-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՏՐՎԱԾ N112/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լիլիթ Հարոյանին և Մկրտիչ Աբրահամյանին Գյումրի քաղաքի Թումանյան փողոց 96 հասցեով հողամասում բնակելի տան և պարսպի նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2024 թվականի սեպտեմբերի 30-ին տրվել է N112/24 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Լիլիթ Հարոյանի դիմումը(մուտքագրված համայնքապետարանում 23.09.2026թ. 17017 թվագրմամբ) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի սեպտեմբերի 30-ին տրված N112/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լիլիթ Հարոյանին և Մկրտիչ Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » հոկտեմբերի 2026 **թվականի** N 2896-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-երորդ հոդվածի 1-ին մասի բ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հայցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՀՇՄԳՀՀ ԿՀ-ԷԱՃԱՊՁԲ -72/26	1	Սպիտակ – մագնիսական գրատախտակներ	679992	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	01096027	Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26	09.10.2026թ.	«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ	«Գնումների մասին» օրենքի 6-երորդ հոդվածի 1-ին մասի բ ենթակետ	Առկա չէ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատ.
Դ.Մանվելյան
Հեռ. /0312/ 2-22-11 /098/11-94-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 2897-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻՆԵ ՇՈՒՐԱՅԻ ԲՈՅԱՋՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑ N 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 13,45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 294,27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 29-ի ժամը 11⁰⁰-ից մինչև հոկտեմբերի 02-ի ժամը 11⁰⁰-ը կազմակերպվել է համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սավոյան փողոց N 2/1 հասցեով (ծածկագիր 08-001-0324-0026) 13,45 (տասներեք ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 294,27 (երկու հարյուր ինսունչորս ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Մարինե Շուրայի Բոյաջյանը մասնակցելով անշարժ գույքի օտարման աճուրդին, և վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 6387400 (վեց միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 05 հոկտեմբերի 2026):

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սավոյան փողոց N 2/1 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 08-001-0324-0026) 13,45 (տասներեք ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 294,27 (երկու հարյուր ինսունչորս ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով հանձնել նշված անշարժ գույքի օտարման աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Մարինե Շուրայի Բոյաջյանին:
2. Սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
3. Առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Մարինե Շուրայի Բոյաջյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարինե Շուրայի Բոյաջյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 2898 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԼՅՈՒԴՎԻԳ ՀԱԿՈԲԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ 7-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N 1/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 9,51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 220,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 29-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 02-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արագածի 7-րդ թաղամաս N 1/9 հասցեով (ծածկագիր 08-001-0170-0070) 9,51 (ինն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 220,0 (երկու հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Լյուդվիգ Հակոբի Հարությունյանը մասնակցելով անշարժ գույքի օտարման աճուրդին, և վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2051600 (երկու միլիոն հիսունմեկ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026):

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արագածի 7-րդ թաղամաս N 1/9 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 08-001-0170-0070) 9,51 (ինն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 220,0 (երկու հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով հանձնել նշված անշարժ գույքի օտարման աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Լյուդվիգ Հակոբի Հարությունյանին:
2. Սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
3. Առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Լյուդվիգ Հակոբի Հարությունյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լյուդվիգ Հակոբի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026-10-09 14:05:45 GMT+4
Ներկայացված է ԷՎԵՆԴ-ի կողմից

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» Հոկտեմբերի 2026 թվականի N 2899-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻՄԱՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 12/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 96,38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԻՄՔԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 161,09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 29-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 02-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոց N 12/2 հասցեով (ծածկագիր 08-001-0170-0068) 96,38 (ինսունվեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հիմքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 161,09 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Սիմավոն Հարությունի Քոչարյանը մասնակցելով անշարժ գույքի օտարման աճուրդին, և վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 1848100 (մեկ միլիոն ութ հարյուր քառասունութ հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026):

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոց N 12/2 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 08-001-0170-0068) 96,38 (ինսունվեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հիմքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 161,09 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով հանձնել նշված անշարժ գույքի օտարման աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Սիմավոն Հարությունի Քոչարյանին:
2. Սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
3. Առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Սիմավոն Հարությունի Քոչարյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սիմավոն Հարությունի Քոչարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:01:30 GMT+4
Հայաստանի ԷՀՏ ԵԼԿ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2900 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՍԼԱՎԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 9/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԻՄՔ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 499,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 29-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 02-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց N 9/6 հասցեով (ծածկագիր 08-001-0319-0045) 10,77 (տասն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հիմք, պարսպի և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 499,7 (չորս հարյուր ինսունինն ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Արմեն Սլավայի Հովհաննիսյանը մասնակցելով անշարժ գույքի օտարման աճուրդին, և վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 15398500 (տասնհինգ միլիոն երեք հարյուր ինսունութ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026):

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց N 9/6 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 08-001-0319-0045) 10,77 (տասն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հիմքը, պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 499,7 (չորս հարյուր ինսունինն ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով հանձնել նշված անշարժ գույքի օտարման աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Արմեն Սլավայի Հովհաննիսյանին:
2. Սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
3. Առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Արմեն Սլավայի Հովհաննիսյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Սլավայի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 16:06:52 GMT+4
Հաստատված է էՀԵՇԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2901 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԿԱԴԻ ՇՈՒՐԱՅԻ ԲՈՅԱՋՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ.ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ N 71/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 21,32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԱՌԱՆԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 134,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 29-ի ժամը 11[00]-ից մինչև հոկտեմբերի 02-ի ժամը 11[00]-ը կազմակերպվել է համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց N 71/3 հասցեով (ծածկագիր 08-001-0335-0021) 21,32 (քսանմեկ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մառան, պարիսպ և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 134,26 (մեկ հարյուր երեսունչորս ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Արկադի Շուրայի Բոյաջյանը մասնակցելով անշարժ գույքի օտարման աճուրդին, և վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 6641200 (վեց միլիոն վեց հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026):

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց N 71/3 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր 08-001-0335-0021) 21,32 (քսանմեկ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մառանը, պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 134,26 (մեկ հարյուր երեսունչորս ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով հանձնել նշված անշարժ գույքի օտարման աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Արկադի Շուրայի Բոյաջյանին:
2. Սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
3. Առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Արկադի Շուրայի Բոյաջյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արկադի Շուրայի Բոյաջյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:03:29 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2902-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԷԴՄՈՆ ՎԱՐԴԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ N 5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 29,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոց N 5/1 հասցեով (ծածկագիր 08-001-0649-0063) 29,48 (քսանինն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Էդմոն Վարդանի Մելքոնյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 1123500 (մեկ միլիոն հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 01 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոց N 5/1 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 29,48 (քսանինն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0649-0063) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Էդմոն Վարդանի Մելքոնյանին ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Էդմոն Վարդանի Մելքոնյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Էդմոն Վարդանի Մելքոնյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել ավտոտնակ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էդմոն Վարդանի Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:11:07 GMT+4
Համաստուած է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 2903 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 229,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոց N 39 հասցեով (ծածկագիր 08-001-0124-0023) 229,5 (երկու հարյուր քսանինն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Լուսինե Արամայիսի Հարոնյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 10598000 (տասը միլիոն հինգ հարյուր ինսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոց N 39 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 229,5 (երկու հարյուր քսանինն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0124-0023) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Լուսինե Արամայիսի Հարոնյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Լուսինե Արամայիսի Հարոնյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Լուսինե Արամայիսի Հարոնյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լուսինե Արամայիսի Հարոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:09:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2904 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՍՅԱ ԱՐԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ N 9/28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 32,64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հալաբյան փողոց N 9/28 հասցեով (ծածկագիր 08-001-0128-0061) 32,64 (երեսուներկու ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Ասյա Արայի Գևորգյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 600000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հալաբյան փողոց N 9/28 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 32,64 (երեսուներկու ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0128-0061) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Ասյա Արայի Գևորգյանին ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Ասյա Արայի Գևորգյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Ասյա Արայի Գևորգյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել ավտոտնակ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ասյա Արայի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:14:51 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2905 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՀԱՅԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 5796,67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց 1-ին փակուղի N 4 հասցեով (ծածկագիր 08-001-0233-0010) 5796,67 (քսանինն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Վարդան Հայկի Գրիգորյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 28203000 (քսանութ միլիոն երկու հարյուր երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 01 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց 1-ին փակուղի N 4 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 5796,67 (քսանինն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0233-0010) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Վարդան Հայկի Գրիգորյանին սպորտային կենտրոն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Վարդան Հայկի Գրիգորյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Վարդան Հայկի Գրիգորյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպորտային կենտրոն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վարդան Հայկի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:17:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» հոկտեմբերի 2026 ԹՎԱԿԱՆԻ N 2906-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ.ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ 28 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի Վ.Աճեմյան փողոց 28 հասցեի 269,1 (երկու հարյուր վաթսունինը ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի №124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Վահան Նիկոլի Հունանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 22-ին № 16903 թվագրմամբ).՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Վ.Աճեմյան փողոց 28 հասցեի 269,1 (երկու հարյուր վաթսունինը ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Վահան Նիկոլի Հունանյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունվարի 2026 թվականի №2904Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 133.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0124-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/1938-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի հարևանությամբ գտնվող 133.57 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0124-0001-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Գործարանային փողոց, 35/1 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» հոկտեմբերի 2026 թվականի №2908-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի №2728-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2081-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի №2728-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի կիսակառույց շինությանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Գործարանային փողոց, 31/1 կիսակառույց

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2909-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՐԱԼԲԵՐԳԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N 6/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1572,53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց 1-ին փակուղի N 6/2 հասցեով (ծածկագիր 08-001-4005-0003) 1572,53 (մեկ հազար հինգ հարյուր յոթանասուներկու ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Արմեն Ռազմիկի Բադալյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 6585000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 02 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց 1-ին փակուղի N 6/2 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 1572,53 (մեկ հազար հինգ հարյուր յոթանասուներկու ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-4005-0003) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Արմեն Ռազմիկի Բադալյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Արմեն Ռազմիկի Բադալյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Արմեն Ռազմիկի Բադալյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Ռազմիկի Բադալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 14:13:10 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N2910-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՄԻԿՈՆ ՍՈՍԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 600,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 01-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց N 14 հասցեով (ծածկագիր 08-001-0233-0009) 600,0 (վեց հարյուր) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Մամիկոն Սոսի Մինասյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 3127500 (երեք միլիոն հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 01 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց N 14 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 600,0 (վեց հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0233-0009) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Մամիկոն Սոսի Մինասյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Մամիկոն Սոսի Մինասյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Մամիկոն Սոսի Մինասյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մամիկոն Սոսի Մինասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-01-09 14:19:09 GMT+4
Հեղինակված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01 Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ ԽՈՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«09» հոկտեմբերի 2026 թվական N 2911 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 06-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Խորեն Հովհաննեսի Մխիթարյանի (ՀԾՀ՝ 1809980364, հասցե՝ ք.Գյումրի, Մնջոյան փ., 7 Գ շենք,) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի Խորեն Հովհաննեսի Մխիթարյանին պատկանող INFINITI FX 35 3.5 մակնիշի 36 XP 828 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2021-2025 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի

եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2026 թվականի հոկտեմբերի 05 -ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 878.191 (ութ հարյուր յոթանասունութ հազար հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 652.500 (վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 225.691 (երկու հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ

հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Խորեն Հովհաննեսի Մխիթարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 878.191 (ութ հարյուր յոթանասունութ հազար հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 652.500 (վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 225.691 (երկու հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Խորեն Հովհաննեսի Մխիթարյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Խորեն Հովհաննեսի Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-09 11:59:41 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01 Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՉ ԼԵՎՈՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«09» հոկտեմբերի 2026 թվական N 2912 - Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 07-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, Հրաչ Լևոնի Մելքոնյանի (ՀԾՀ՝ 2010520505, հասցե՝ ք. Գյումրի,Ղուկասյան 1 Շարք փ., 16 շենք) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Հրաչ Լևոնի Մելքոնյանին պատկանող MERCEDES- BENZ 500 C մակնիշի 09 OL 979 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2016-2020 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը):

